

Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
 ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
 Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
 31.08.2020թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀՀ քրեական իրավունք 2
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն, վճարովի ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՍԲԻՈՆ	Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Մ.Մարկոսյան (ի.գ.թ., դոցենտ) E-mail: misakmmm100@mail.ru , հեռ. 093 60 15 70
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՍՅԱԿ	2-րդ կուրս, 4-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	բակալավր

ԿՐԵՂԻՏՆԵՐ	5 (հինգ)
ԴԱՍԱԺԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	<p>«ՀՀ քրեական իրավունք 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 150 ժամ, որից 32 ժամ դասախոսություն, 22 ժամ սեմինար պարապմունք, 10 ժամ գործնական պարապմունք, 86 ժամ ինքնուրույն աշխատանք:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Դասընթացի ընթացքում սովորողները հանձնում են երկու միջանկյալ քննություն: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:</p>
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«ՀՀ քրեական իրավունք 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են հանցագործությունների բազմակիտության և արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների ինստիտուտները, պատժի հասկացությունը, նպատակները և համակարգը, պատիժ նշանակելու ինստիտուտը, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերն ու պայմանները, համաներման և ներման իրավական հետևանքները, դատվածության իրավական բնութագիրը, անչափահասների պատժի և պատասխանատվության առանձնահատկությունները, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների իրավական բնութագիրը:

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ հանցագործությունների բազմակիության և արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների ինստիտուտների, պատժի հասկացության, նպատակների և համակարգի, պատիժ նշանակելու ինստիտուտի, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերի ու պայմանների, համաներման և ներման իրավական հետևանքների, դատվածության իրավական բնութագրի, անչափահասների պատժի և պատասխանատվության առանձնահատկությունների, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների իրավական բնութագրի վերաբերյալ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցագործությունների բազմակիության հասկացությունը և տեսակները, • ուսումնասիրել արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների ինստիտուտը, • սահմանել պատժի հասկացությունը և նպատակները, • ներկայացնել պատժի համակարգը, հիմնական և լրացուցիչ պատժատեսակները, • ուսումնասիրել պատիժ նշանակելու ինստիտուտը, • պարզաբանել քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերն ու պայմանները, • վեր հանել համաներման և ներման իրավական հետևանքները, • ներկայացնել դատվածության իրավական բնութագրի, • ծանոթանալ անչափահասների պատժի և պատասխանատվության առանձնահատկություններին, • ներկայացնել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների իրավական բնութագրի:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>Կարողանա՝</p>	<ol style="list-style-type: none"> 1. ներկայացված կոնկրետ իրավիճակում որոշել բազմակիության տեսակը և հիմնավորել սեփական կարծիքը, 2. թվարկել քրեաիրավական նորմերի մրցակցության տեսակները և կիրառել դրանց լուծման կանոնները, 3. ներկայացված կոնկրետ իրավիճակում պարզել այս կամ այն արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանների առկայությունը կամ բացակայությունը, 4. տարբերել արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները իրարից, 5. սահմանել պատժի հասկացությունը և նպատակները, 6. թվարկել բոլոր հիմնական և լրացուցիչ պատժատեսակները, ներկայացնել դրանց չափերը, ինչպես նաև դրանց նշանակման կարգն ու պայմանները, 7. բացահայտել պատիժ նշանակելու սկզբունքների բովանդակությունը, 8. ներկայացված կոնկրետ իրավիճակում որոշել քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու մասին որոշման իրավաչափությունը, 9. բացատրել համաներման և ներման տարբերությունները, 10. ներկայացնել դատվածության իրավական բնութագրի, 11. մատնանշել անչափահասների պատժի և պատասխանատվության առանձնահատկությունները,

		12. թվարկել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, պարզաբանել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման, փոփոխման, դադարեցման կարգը:
--	--	--

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Ս.Առաքելյան և ուրիշներ: ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 3. Գ.Թ.Գրիգորյան, Մ.Ս.Մարկոսյան ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական նորմերի կիրառման վերաբերյալ/Երկրորդ լրամշակված հրատարակություն/Երևան, <<Արման Ասմանգուլյան>> ԱԶ տպարան, 2015թ., 300 էջ: 4. Գրիգորյան Մ.Վ., ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Հրագրան, 2003թ. 5. Уголовное право. Общая и особенная части/ Под ред. Н.Г. Кадникова.- М.: “Городец”, 2006. 6. Ветров Н.И. Уголовное право. Общая и Особенная части.- М.: “Книжный мир”, 2005. 7. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации/ Под общ. ред. В.М.Лебедева. - М.: «НОРМА», 2004.
Լրացուցիչ		<ol style="list-style-type: none"> 1. Գ.Գրիգորյան Քրեաիրավական նորմերի մրցակցությունը: Երևան, 2008, Լիմուշ, 154 էջ: 2. М.Маркосян Освобождение от уголовной ответственности в связи с истечением сроков давности по уголовным кодексам Российской Федерации и Республики Армения: сравнительно-правовой анализ>> //Научный вестник Омской академии МВД России: Научно-практический журнал, 2014, N 4 (55), էջեր 18-22: 3. М.Маркосян Некоторые вопросы освобождения от уголовной ответственности в связи с истечением сроков давности по уголовному кодексу Республики Армения/Материалы международной научно-практической конференции <<Уголовно-правовые и криминологические аспекты борьбы с преступностью, 25 ноября 2016 года, Одесса, Одесский государственный университет внутренних дел, 2016, էջեր 112-113: 4. Ա.Ս.Մելիքսեթյան Հանցագործությունների բազմակիության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, <<Արման Ասմանգուլյան>> ԱԶ տպարան, 2015թ., 126 էջ: 5. Ա.Մելիքսեթյան Հանցագործությունների բազմակիությանն առնչվող օրենսդրական փոփոխությունների շուրջ//Պետություն և իրավունք, 2015, թիվ 2, էջեր 11-18: 6. Հ.Սմբատյան <<Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում//Պետություն և իրավունք, 2015թ., թիվ 2 (68), էջեր 19-24: 7. Ендольцева А.В. Институт освобождения от уголовной ответственности: проблемы и пути их решения: М.:, 2004, 8. Мельникова Э.Б. Ювенальная юстиция: проблемы уголовного права, уголовного процесса и криминологии.- М., 2001

ԳՆԱՀԱՏՄԱՆ		Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1)
-----------	--	-------------------------------

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)			
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով		
	18-20	Գերազանց	Միջանկյալ գնահատման միավոր	
	13-17	Լավ	Հարց 1	Հարց 2
	8-12	Բավարար	2 միավոր	2 միավոր
	0-7	Անբավարար		
	0	Չներկայացած		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐ	<p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է սովորողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա:</p> <p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ուստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևավորվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով:</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների:</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները:</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>			

<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	
<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p> <p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Հանցագործությունների բազմակիություն (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Հանցագործությունների հասկացությունը և տեսակները 2. Հանցագործությունների համակցություն 3. Հանցագործությունների ռեցիդիվ 4. Քրեաիրավական նորմերի մրցակցությունը	Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարցեր 2-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում նյութը, առանձնացնում անհասկանալի հարցերը: Ըստ նախապես տրված հանձնարարության կազմում են աղյուսակ՝ բազմակիության ձևերի հարաբերակցության վերաբերյալ: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանձնարարված նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Խմբային քննարկման միջոցով մեկնաբանվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքում կատարված աշխատանքը: Հարց 4. Գործնական պարապմունք: Սովորողները կատարում են դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծում՝ հիմնավորելով սեփական տեսակետը:

Թեմա 2 Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները (6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք, 4 ժամ գործնական պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների հասկացությունը 2. Անհրաժեշտ պաշտպանություն 3. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը 4. Ծայրահեղ անհրաժեշտություն 5. Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք 6. Հիմնավորված ռիսկ 7. Հրաման կամ կարգադրություն կատարելը	Հարցեր 1-7 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարցեր 2-7 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում նյութը, առանձնացնում անհասկանալի հարցերը: Ըստ նախապես տրված հանձնարարության մշակում են մեկական օրինակ՝ յուրաքանչյուր արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի համար: Հարցեր 1-7 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանձնարարված նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Խմբային քննարկման

	<p>միջոցով մեկնաբանվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքում կատարված աշխատանքը:</p> <p>Հարցոր 2-4. Գործնական պարապմունք: Սովորողները կատարում են դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծում՝ հիմնավորելով սեփական տեսակետը:</p>
--	---

<p>Թեմա 3</p> <p>Պատժի հասկացությունը և նպատակները</p> <p>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Պատժի հասկացությունը և հատկանիշները</p> <p>2. Պատժի նպատակները</p>	<p>Հարցեր 1-2 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:</p> <p>Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում նյութը, առանձնացնում անհասկանալի հարցերը:</p> <p>Հարցեր 1-2 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանձնարարված նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Խմբային քննարկման միջոցով ամփոփվում են պատժի և պետական հարկադրանքի մյուս միջոցների տարբերություններն ու ընդհանրությունները:</p>

<p>Թեմա 4</p> <p>Պատժի համակարգը</p> <p>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Պատժի համակարգի հասկացությունը: Պատժի տեսակները</p> <p>2. Ազատագրկման հետ չկապված պատիժներ</p> <p>3. Ազատագրկման հետ կապված պատիժներ</p>	<p>Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2,3 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ուսումնասիրում են գրականությունը, պատրաստվում են սեմինար պարապմունքին:</p> <p>Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը:</p>

<p>Թեմա 5</p> <p>Պատիժ նշանակելը</p> <p>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները</p> <p>2. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ</p>	<p>Հարցեր 1-7 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների</p>

<p>նշանակելը</p> <p>3. Պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար</p> <p>4. Պատիժ նշանակելը հանցագործությունների համակցությամբ և դատավճիռների համակցությամբ</p> <p>5. Պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում</p> <p>6. Պատժի ժամկետները հաշվելը և պատիժը հաշվակցելը</p> <p>7. Պատիժը պայմանականորեն չկիրառելը</p>	<p>ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:</p> <p>Հարցեր 2-5 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում նյութը, առանձնացնում անհասկանալի հարցերը: Հարցեր 1-7 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանձնարարված նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը:</p> <p>Հարցեր 2-5. Գործնական պարապմունք: Սովորողները կատարում են դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծում՝ հիմնավորելով սեփական տեսակետը:</p>
---	--

<p align="center">Թեմա 6</p> <p align="center">Քրեական պատասխանատվությունից ազատելը</p> <p align="center">(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>1. Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն գղջալու դեպքում</p> <p>2. Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում</p> <p>3. Քրեական պատասխանատվությունից ազատելը իրադրության փոփոխման դեպքում</p> <p>4. Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետը անցնելու հետևանքով</p>	<p>Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:</p> <p>Հարցեր 2-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում նյութը, առանձնացնում անհասկանալի հարցերը: Ըստ նախապես տրված հանձնարարության մշակում են մեկական իրավիճակ՝ քրեական պատասխանատվությունից ազատելու յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ:</p> <p>Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանձնարարված նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Խմբային քննարկման միջոցով մեկնաբանվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքում կատարված աշխատանքը:</p> <p>Հարցեր 2-4. Գործնական պարապմունք: Սովորողները կատարում են դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծում՝ հիմնավորելով սեփական տեսակետը:</p>

<p align="center">Թեմա 7</p> <p align="center">Պատժից ազատելը</p> <p align="center">(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>1. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը</p> <p>2. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով</p>	<p>Հարցեր 1-6 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային</p>

<p>փոխարինելը</p> <p>3. Հղի կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց պատիժը կրելը հետաձգելը և պատժից ազատելը</p> <p>4. Պատժից ազատելը ծանր հիվանդության հետևանքով</p> <p>5. Պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով</p> <p>6. Պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով</p>	<p>հարցերի վրա:</p> <p>Հարցեր 2-6 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում նյութը, առանձնացնում անհասկանալի հարցերը: Ըստ նախապես տրված հանձնարարության մշակում են մեկական իրավիճակ պատժից ազատելու յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հարցեր 1-6 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանձնարարված նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Խմբային քննարկման միջոցով մեկնաբանվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքում կատարված աշխատանքը:</p> <p>Հարցեր 2-4. Գործնական պարապմունք: Սովորողները կատարում են դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծում՝ հիմնավորելով սեփական տեսակետը:</p>
--	--

<p align="center">Թեմա 8</p> <p align="center">Համաներում, ներում, դատվածություն</p> <p align="center">(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>1. Համաներում</p> <p>2. Ներում</p> <p>3. Դատվածություն</p>	<p>Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը: Անհատական հանձնարարությունների կատարման միջոցով ստուգվում են սովորողների կարողությունները ներկայացված իրավիճակում դատվածության մարման ժամկետը ճիշտ հաշվարկելու առումով:</p>

<p align="center">Թեմա 9</p> <p align="center">Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները</p> <p align="center">(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>1. Անչափահասների նկատմամբ կիրառվող պատժատեսակները</p> <p>2. Անչափահասին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը</p> <p>3. Անչափահասների դատվածության մարումը</p>	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են</p>

	գրականությանը, յուրացնում նյութը, առանձնացնում անհասկանալի հարցերը: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանձնարարված նյութը, դասախոսը պարզաբանում է անհասկանալի մնացած հարցերը: Խմբային քննարկման միջոցով ամփոփվում են անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները:
--	--

Թեմա 10 Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների հասկացությունը, կիրառման հիմքը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակումը, փոփոխումը, դադարեցումը:</p> <p>2. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսակները</p>	<p>Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք: Սովորողները ուսումնասիրում են տեսական գրականությունը, առանձնացնում անհասկանալի մնացած հարցերը: Հարցեր 1-2. Սեմինար պարապմունք. Կատարվում է սովորողների հարցում, պարզաբանվում են անհասկանալի մնացած հարցերը: Խմբային քննարկման միջոցով ամփոփվում է ԲԲՀՄ տեսակների, դրանք նշանակելու, փոփոխելու և վերացնելու հիմքերի վերաբերյալ նյութը:</p>

Հարցաշար

«Քրեական իրավունք 2» դասընթացի 1-ին միջանկյալ քննության

1. Հանցագործությունների համակցություն և դրա տեսակները
2. Ռեցիդիվի հասկացությունը և դրա տեսակները
3. Քրեաիրավական նորմերի մրցակցությունը
4. Անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը, ոտնձգությանը վերաբերող իրավաչափության պայմանները
5. Անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը, պաշտպանությանը վերաբերող իրավաչափության պայմանները
6. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը և դրա իրավաչափության պայմանները
7. Ծայրահեղ անհրաժեշտությունը և դրա իրավաչափության պայմանները
8. Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը
9. Հիմնավորված ռիսկը և դրա իրավաչափության պայմանները
10. Հրաման կամ կարգադրություն կատարելը, դրա իրավաչափության պայմանները
11. Պատժի հասկացությունը և հատկանիշները
12. Պատժի նպատակները

Հարցաշար

«Քրեական իրավունք 2» դասընթացի 2-րդ միջանկյալ քննության

1. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը
2. Պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար
3. Պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ
4. Պատիժ նշանակելը դատավճիռների համակցությամբ
5. Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն գղջալու դեպքում
6. Քրեական պատասխանատվությունից ազատելը իրադրության փոփոխման դեպքում
7. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը
8. Պատիժը պայմանականորեն չկիրառելը
9. Համաներում
10. Ներումը

Հարցաշար

«Քրեական իրավունք 2» դասընթացի կիսամյակային քննության

1. Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները
2. Օրինականության սկզբունքը
3. Օրենքի առջև հավասարության սկզբունքը
4. Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը
5. Անձնական պատասխանատվության սկզբունքը
6. Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը
7. Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը
8. Մարդասիրության սկզբունքը
9. Քրեական իրավունքի աղբյուրները
10. Քրեական օրենքի հասկացությունը, հատկանիշները և նշանակությունը
11. Դիսպոզիցիայի հասկացությունը և տեսակները
12. Սանկցիայի հասկացությունը և տեսակները
13. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում
14. Քրեական օրենքի հետադարձ ուժը

15. Քրեական օրենքի գործողությունը ՀՀ տարածքում հանցանք կատարած անձանց նկատ-մամբ
16. Քրեական օրենքի գործողությունը ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած անձանց նկատ-մամբ
17. Հանցանք կատարած անձանց հանձնելը
18. Հանցագործության հասկացությունը և հատկանիշները
19. Հանցագործությունների դասակարգումը
20. Հանցակազմի հասկացությունը և նշանակությունը
21. Հանցակազմի տարրերն ու հատկանիշները
22. Հանցակազմի տեսակները
23. Հանցագործության օբյեկտի հասկացությունը և նշանակությունը
24. Հանցագործության օբյեկտի տեսակները
25. Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը
26. Հանրորեն վտանգավոր գործողություն
27. Հանրորեն վտանգավոր անգործություն
28. Պատճառական կապի հասկացությունը և նշանակությունը
29. Հանցագործության հետևանքը, վայրը, ժամանակը, իրադրությունը, եղանակը, գործիքն ու միջոցը
30. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը և հատկանիշները
31. Անմեղսունակություն և դրա չափանիշները
32. Սահմանափակ մեղսունակություն
33. Պատասխանատվությունը հարբած վիճակում հանցանք կատարելու համար
34. Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը
35. Մեղքը որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, դրա նշանակությունը
36. Ուղղակի դիտավորություն
37. Անուղղակի դիտավորություն
38. Ինքնավստահություն
39. Անփութություն
40. Առանց մեղքի վնաս պատճառելը
41. Պատասխանատվությունը մեղքի երկու ձևերով հանցագործության համար
42. Հանցագործության շարժառիթը, նպատակը և հույզերը
43. Միալը և դրա քրեաիրավական նշանակությունը
44. Քրեական պատասխանատվության հասկացությունը և հիմքը
45. Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները
46. Հանցագործության նախապատրաստություն
47. Հանցափորձ, դրա տեսակները
48. Հանցագործությունից կամովին հրաժարվելը
49. Հանցակցության հասկացությունը և հատկանիշները
50. Հանցագործության կատարող
51. Հանցագործության կազմակերպիչ
52. Հանցագործության դրդիչ
53. Հանցագործության օժանդակող
54. Հանցակցության ձևերը
55. Հանցակիցների պատասխանատվությունը
56. Հանցակցի սահմանագանցում
57. Հանցագործությունների բազմակիռության հասկացությունը և տեսակները
58. Հանցագործությունների համակցության հասկացությունը և տեսակները
59. Հանցագործությունների ռեցիդիվ
60. Քրեաիրավական նորմերի մրցակցության հասկացությունը և պատճառները
61. Անհրաժեշտ պաշտպանություն, դրա իրավաչափության պայմանները
62. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը
63. Ծայրահեղ անհրաժեշտություն, դրա իրավաչափության պայմանները
64. Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք
65. Հիմնավորված ռիսկ
66. Հրաման կամ կարգադրություն կատարելը
67. Պատժի հասկացությունը և հատկանիշները
68. Պատժի նպատակները

69. Պատժի համակարգը և տեսակները
70. Տուգանք
71. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրա-վունքից զրկելը
72. Հանրային աշխատանքներ
73. Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը
74. Գույքի բռնագրավումը
75. Կալանքը
76. Կարգապահական գումարտակում պահելը
77. Ազատազրկումը որոշակի ժամկետով
78. Ցմահ ազատազրկումը
79. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները
80. Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները
81. Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները
82. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը
83. Պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար
84. Պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում
85. Պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ
86. Պատիժ նշանակելը դատավճիռների համակցությամբ
87. Պատիժը պայմանականորեն չկիրառելը
88. Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն գղջալու դեպքում
89. Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում
90. Քրեական պատասխանատվությունից ազատելը իրադրության փոփոխման դեպքում
91. Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով
92. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը
93. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը
94. Հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը
95. Պատժից ազատելը ծանր հիվանդության հետևանքով
96. Պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով
97. Պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով
98. Համաներումը
99. Ներումը
100. Դատվածություն
101. Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները
102. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հիմքը և տեսակները